ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՔԿԴ-ԲՄԱՇՁԲ-ԳՇ-18/1.1

ք. Երևան «03» հոկտեմբեր 2018թ.

ՀՀ քննչական կոմիտեն, ի դեմս դեպարտամենտի ղեկավար Ա.Զալինյանի, որը գործում է Դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գազկոմշին» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Միսակյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային վարչության շենքի հիմնանորոգման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 05.12.2018թ:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **147355200 (մեկ հարյուր քառասունյոթ միլիոն երեք հարյուր հիսունհինգ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, որից 24559200 (քսանչորս միլիոն հինգ հարյուր հիսունինը հազար երկու հարյուր)** ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը

միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ քննչական կոմիտե ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն, Հ/Հ 900011019776 ՀՎՀՀ 02631263 (ստորագրություն) Կ.Տ	«Գազկոմշին» ՍՊԸ Ք. Երևան, Նոր Նորքի 9-րդ զ-ծ, 20/53, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Հ/Հ 11500905218000 ՀՎՀՀ 00843968 էլ. հասցեն՝ gascomshin@gmail.com հեռ. (095)000027 (ստորագրություն) Կ.Տ

Հավելված թիվ 1
« 03 » հոկտեմբեր 2018 թ. կնքված
ՀՀՔԿԴ-ԲՄԱՇՁԲ-ԳՇ-18/1.1 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային վարչության շենքի հիմնանորոգման աշխատանքների կատարման

ՀՀ	Հիմնավորում	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չ/Մ	Քանակը	միավորի գին հազ.դր	Ընդհանուրը (հազ. դրամ)
1	2	3	4	5	6	7
		Քանդման աշխատանքներ				
1	E23-146 ԲԿՏՄ	Սվաղված բետոնե սալիկներով միջնորմների քանդում	100մ^2	2,300	17,814	40,971
2	E3-12 ԲԿՏՄ	Պատերի կահույքե վահաններով երեսապատման քանդում և հանձնում սեփականատիրոջը	մ^2	40,000	0,118	4,735
3	E3-12 ԲԿՏՄ	Պատերի ԴՍՊ վահաններով երեսապատման քանդում և հանձնում սեփականատիրոջը	մ^2	290,000	0,118	34,330
4	E46-124	Դռների և վիտրաժների ապամոնտաժում և հանձնում սեփականատիրոջը	100մ^2	1,630	26,994	44,001
5	E46-122 E46-123	Պատուհանների ապամոնտաժում և հանձնում սեփականատիրոջը	100մ^2	1,570	27,809	43,661
6	E46-93	Կախովի առաստաղի քանդում	100մ^2	2,600	11,996	31,189
7	E11-94 ԲԿՏՄ	Պատերի, շեպերի գաջե սվաղի քանդում	100մ^2	21,000	35,891	753,713
8	E46-95	Հարթ կտուրի ծածկի քանդում	100մ^2	2,500	17,288	43,220
9	E46-103	Հատակի մանրահատակե ծածկույթի քանդում	100մ^2	3,000	53,210	159,629
10	E46-118 կիրարկ	Հատակի լինոլեումե ծածկույթի քանդում	100մ^2	4,500	4,483	20,173
11	E13-5 ԲԿՏՄ կիրարկ.	Հատակների մետլախե և բետոնե սալիկներով երեսապատման քանդում	մ2	121,000	0,582	70,446
12	E17-140 ԲԿՏՄ	Ջեռուցման սարքերի ապամոնտաժում և հանձնում սեփականատիրոջը	հատ	86,000	0,941	80,930
13	E17-64 ԲԿՏՄ	Խողովակների ապամոնտաժում և հանձնում սեփականատիրոջը	մ	300,000	0,640	192,126
14	E25-3 ԲԿՏՄ	Աստիճանավանդակների մետաղե բազրիքների ապամոնտաժում և հանձնում սեփականատիրոջը	տն	0,550	70,056	38,531
15	E19-69 ԲԿՏՄ	Ոչ պիտանի վացարանների ապամոնտաժում	հատ	12,000	0,480	5,764
16	E19-70 ԲԿՏՄ	Ոչ պիտանի զուգարանակոնքերի ապամոնտաժում	հատ	12,000	0,594	7,129
17	E23-120 ԲԿՏՄ	էլեկտրահաղորդալարերի լարանցման ակոսների փորում գաջե սվաղում	100գծ մ	18,000	10,693	192,466
18	E46-96	Տանիքի թիթեղապատվածքի քանդում ,	100մ^2	0,800	9,483	7,586
19	E46-131	Մուտքերի բազալտե աստիճանների քանդում	100մ	0,500	123,038	61,519

20	E46-79	Քարե պատի քանդում	մ^3	4,500	11,588	52,144
21	E23-248 ԲԿՏՄ	Սենյակներում շին աղբից մաքրում	տն	124,620	0,602	74,972
22	E23-222 ԲԿՏՄ	Շինաղբի բարձում ավտոմեքենաների վրա ձեռքով	տն	124,620	0,349	43,532
23	h310-10	Շինաղբի տեղափոխում ավտոմեքենաներով մինչև 10կմ հեռավորության վրա	տոն	124,620	1,998	248,993
		Ընդամենը				**2251,762**
		Պատեր, միջնորմներ				
1	E8-507	Խարիսխի շարվածք սրբատաշ բազալտե քարերով,	մ^2	2,000	16,378	32,757
2	E8-509	Պատերի շարվածք սրբատաշ տուֆե քարերով,	մ^2	6,000	22,142	132,855
3	E6-90	Հետնամասի բետոնացում, B7,5 /100/ դասի բետոնից,	մ^3	3,000	43,985	131,954
4	E8-163	Պատերի լրալցում տուֆե քարերով,	մ^2	14,000	19,438	272,137
5	E8-169	Միջնորմների շարվածք պեմզոբլոկով, 390x190x90մմ,	մ^2	168,000	4,300	722,460
6	E8-150	Անցքերի լցում, B 12,5 դասի թեթև բետոն	մ^3	9,100	30,294	275,671
7	C124-1-6	Ամրան A-I դասի Φ 6 մմ	տոն	0,105	377,977	39,688
8	C124-3-12	Ամրան A-III դասի Φ 12 մմ	տոն	0,290	365,354	105,953
9	E9-210 կիրարկ	Միջնորմների ամրացում գլոծվացքային անկյունակներով, 100x100x4մմմ, L=100մմ	տն	0,170	557,519	94,778
		Ընդամենը				**1808,253**
		Աստիճանավանդակ				
		Վիտրաժ և աստիճանավանդակի բազրիք				
1	C122	Մետաղապլաստե վիտրաժ, կաղնեգույն 1 տակ ապակի 4մմ, 2800x2600մմ, 10հատ,	մ^2	72,800	41,389	3013,119
2	E15-77	Աստիճանների ուղղահայաց և հորիզոնական մասերի երեսապատում բազալտե հղկված սալիկներով, 2սմ հաստ	մ^2	53,000	47,952	2541,465
3	E11-221 կիրարկ.	Աստիճանահարթակների երեսապատում բազալտե հղկված սալիկներով, 2սմ հաստ	մ^2	38,000	14,830	563,546
4	Շուկա	Աստիճանների ալյումինե բազրիքների մոնտաժում,	գմ	48,000	24,000	1152,000
		Ընդամենը				**7270,130**
		Դռներ				
1	E14-300 ԲԿՏՄ K=1,5	Մետաղե կռածո աժուրային դռան տեղադրում, 4մ2	մ^2	4,00	140,79	563,144
2	E14-300 ԲԿՏՄ K=1,5	Մետաղե կռածո աժուրային դռան հակակոռոզիոն ներկում,սևագույն, 4մ2x1,5= 37,95մ2	մ^2	7,20	1,31	9,408
3	C122	Ներքին ՍԴՖ-ից դռներ եզրակալներով 2300(h)x900մմ, հատ	մ^2	95,22	36,12	3439,602
4	C122	/2100(H)x900մմ, 25հատ/ չափերով մետաղապլաստից դռների տեղադրում, խուլ, գունավոր,	մ^2	36,25	40,00	1450,000
		Ընդամենը				**5462,155**
		Պատուհաններ				

1	C122	/1800(H)x1500մմ,25հատ/ չափերով մետաղապլաստից պատուհանների տեղադրում, ապակեփաթեթով, գունավոր, բացվող մաս	մ^2	33,75	43,33	1462,388
2	C122	/1800(H)x1500մմ,25հատ/ չափերով մետաղապլաստից պատուհանների տեղադրում, ապակեփաթեթով, գունավոր, չբացվող մաս	մ^2	33,75	28,75	970,313
3	C122	/1500(H)x1500մմ, 25հատ/ չափերով մետաղապլաստից պատուհանների տեղադրում, ապակեփաթեթով, գունավոր, բացվող մաս	մ^2	28,13	43,33	1218,656
4	C122	/1500(H)x1500մմ, 25հատ/ չափերով մետաղապլաստից պատուհանների տեղադրում, ապակեփաթեթով, գունավոր, չբացվող մաս	մ^2	28,13	28,75	808,594
5	C122	/1200(H)x1500մմ, 9հատ/ չափերով մետաղապլաստից պատուհանների տեղադրում, ապակեփաթեթով, գունավոր, բացվող մաս	մ^2	8,10	43,33	350,973
6	C122	/1200(H)x1500մմ, 9հատ/ չափերով մետաղապլաստից պատուհանների տեղադրում, ապակեփաթեթով, գունավոր, չբացվող մաս	մ^2	8,10	28,75	232,875
7	C122	/600(H)x2400մմ, 8հատ/ չափերով մետաղապլաստից պատուհանների տեղադրում, ապակեփաթեթով, գունավոր, չբացվող	մ^2	11,52	28,75	331,200
8	C122	/1200(H)x600մմ, 8հատ/ չափերով մետաղապլաստից պատուհանների տեղադրում, ապակեփաթեթով, գունավոր, չբացվող	մ^2	5,76	28,75	165,600
9	E10-103	Պլաստմասե կաղնեգույն պատուհանագոգերի տեղադրում,40սմ լայնքով , 98գծմ	մ^2 պատուհան	139,95	5,29	740,053
10	E12-280	Արտաքին պատուհանագոգերի տեղադրում, ցինկապատ թիթեղ 0,6մմ հաստ	100մ^2	0,40	80,78	32,312
		Ընդամենը				**6312,962**
		Հատակներ				
1	E13-31	Գոյություն ունեցող գրանիտե հատակների ողորկում	100մ^2	0,700	293,429	205,401
		Կերամագրանիտե սալիկներով հատակներ				
2	E11-55	Հարթեցնող շերտ ցեմենտ-ավազային երեսասվաղ, 20մմ հաստ.	100մ^2	3,162	121,169	383,137
3	E11-221	Հատակների երեսապատում կերամագրանիտե սալիկներով	մ^2	316,200	14,989	4739,404
4	E11-221	Կերամագրանիտե սալիկներով շրիշակների պատրաստում H=10 սմ /330գծմx0,1մ=33 մ2/	մ^2	33,000	15,641	516,158
		Կերամիկական սալիկներով հատակներ				
5	E11-55	Հարթեցնող շերտ ցեմենտ-ավազային երեսասվաղ, 20մմ հաստ.	100մ^2	1,043	121,169	126,380
6	E11-18	Ջրամեկուսիչ շերտ ռուբերոիդից	100մ^2	1,043	242,875	253,318
7	E11-134	Ծածկի շերտ կերամիկական սալիկներով, մետլախ	100մ^2	1,043	2087,136	2176,882
		Լամինատե հատակներ				
8	E11-55	Հարթեցնող շերտ ցեմենտ-ավազային երեսասվաղ, 20մմ հաստ.	100մ^2	10,902	121,169	1320,988
9	E11-188 Կիրարկ.	Լամինատե հատակների ծածկույթի իրականացում, 12մմ հաստ, սպունգով	մ^2	1090,200	11,993	13074,910
10	E5-43 ԲԿՏՄ	Շրիշակների տեղադրում	100մ	11,200	146,336	1638,965
		Բեմ				

11	Е10-28 կիրարկում	Բեմի փայտե հենակմախքի տեղադրում	մ^3	2,000	196,731	393,461
12	Е10-34 կիրարկում	Հատակի հորիզոնական մասերի ծածկույթ նրբատախտակով,10մմհաստ	մ^2	18,000	3,521	63,382
13	Е10-34 կիրարկում	Հատակի ուղղահայաց մասերի ծածկույթ նրբատախտակով,10մմհաստ	մ^2	3,600	3,518	12,665
14	Е11-205 Կիրարկ.	Հատակների արհեստական գորգածածկույթի իրականացում	100մ^2	0,180	625,888	112,660
		Ընդամենը				**25017,711**
		Ներքին հարդարում				
1	Е11-57	Պատերի գաջե սվաղի բարձրորակ վերանորոգում	100մ^2	36,000	219,319	7895,490
2	Е15-277-1	Շեպերի բարձրորակ գաջե սվաղ	100մ^2	1,920	371,174	712,654
3	Е14-320 ԲԿՏՄ կիրարկ	Պատերի մակերևույթից ներկի մաքրում	100մ^2	14,000	13,798	193,174
4	Е15-258	Պատերի բարձրորակ ցեմենտ-ավազե սվաղ կաֆելե երեսապատվածքի տակ	մ^2	240,000	2,387	572,890
5	Е15-82	Պատերի երեսապատում կերամիկական սալիկներով՝կաֆել	մ^2	200,000	11,982	2396,429
6	Е15-664	Պատերի և շեպերի ներկում լատեքսային ներկով, կիսափայլուն	100մ^2	51,700	188,776	9759,711
7	Е13-263	Ներքին երեսապատված պատերի մաքրում	մ^2	180,000	1,145	206,099
8	Е15-21	Ներքին պատերի երեսապատման լրացում ֆելզիտե սալիկներով, 3սմ հաստ	մ^2	60,000	11,016	660,977
		բ/ Առաստաղներ				
9	Е9-102 կիրարկ	Կախովի առաստաղի պատրաստում ապամոնտաժած էլեմենտներով և պակասած մասի ավելացումով (50մ2)	մ^2	260,000	9,166	2383,038
10	Շուկա	Ձգվող առաստաղի պատրաստում պոլիվինիլքլորիդային գունավոր թաղանթով, 0,25մմհաստ	մ^2	600,000	5,000	3000,000
11	Е14-320 ԲԿՏՄ կիրարկ	Առաստաղի մակերևույթից ներկի մաքրում	100մ^2	3,000	15,331	45,994
12	Е15-253-1	Սվաղի բարձրորակ վերանորոգում	100մ^2	3,000	242,847	728,540
13	Е15-665	Բարձրորակ ներկում լատեքսային ներկով	100մ^2	6,000	217,841	1307,044
14	Е15-622	Մետաղե դռների և պատուհանների ճաղավանդակների հակակոռոզիոն ներկում	մ^2	50,000	1,129	56,464
		Ընդամենը				**29918,505**
		Տանիք				
1	Е11-55	Հարթեցնող շերտ ցեմենտ-ավազային երեսասվաղ, 30մմ հաստ.	100մ^2	2,500	151,466	378,664
2	Е12-94	Կտուրի վերին շերտը փայլաթիթեղով երկշերտ իզոգամե ծածկույթի պատրաստում	100մ^2	2,500	429,060	1072,651
3	Е8-18 ԲԿՏՄ	Փայտե կավարամածի փոխում	100մ^2	0,800	270,588	216,471
4	Е12-280	Ցինկապատ թիթեղե ծածկույթով կտուրի վերնորոգում, ցինկապատ թիթեղ 0,6մմ հաստ.	100մ^2	0,800	181,915	145,532
		Ընդամենը				**1813,318**
		Սյունազարդ նախասրահ				
1	Е1-961	3րդ խմբի հողի ձեռքով մշակում	100մ^3	0,080	213,474	17,078
2	Е23-226	Ավելորդ գրունտի բարձում ավտոհնքնաթափերի վրա ձեռքով՝	տն	8,800	0,388	3,416
3	Е310-10	Տեղափոխություն մինչև 10կմ,բեռնաթափում՝	տն	8,800	1,998	17,583
4	Е1-967	Գրունտի հետլիցք ձեռքով	մ^3	2,500	1,106	2,764
5	Е1-1185	Գրունտի խտացում	մ^3	2,500	0,255	0,639

6	E6-13	Բետոնից միաձույլ հիմքերի կառուցում, B 7,5 (100) դասի բետոն,	մ^3	11,000	42,492	467,412
7	E8-509	Պատերի սրբատաշ տուֆե քարերով երեսապատում, Հոկտեմբերյանի տուֆ	մ^2	30,000	31,761	952,841
8	E8-163	Պատերի շարք ուղիղ կտրված տուֆե քարերով, հետնամաս	մ^3	8,000	19,322	154,575
9	E8-534	Հոկտեմբերյանի տուֆե քարից քիվի տեղադրում	գծմ	16,000	26,291	420,657
10	E6-161	Ե/բետոնից միաձույլ հեծանների կառուցում, B 20 (250) դասի բետոն,	մ^3	3,000	78,500	235,499
11	C124-1-6	Ամրան A-I դասի Φ 6մմ	տոն	0,120	390,626	46,875
12	C124-3-10	Ամրան A-III դասի Φ 10մմ	տոն	0,320	383,938	122,860
13	E6-175	Ե/բետոնից միաձույլ ծածկի կառուցում, B 20 (250) դասի բետոն,	մ^3	4,000	54,144	216,577
14	C124-1-6	Ամրան A-I դասի Φ 6մմ	տոն	0,140	390,626	54,688
15	C124-3-10	Ամրան A-III դասի Φ 10մմ	տոն	0,400	383,938	153,575
16	Շուկա	Հոկտեմբերյանի տուֆե քարից շրջանային կտրվածքով սյուների տեղադրում, d=400մմ,Ամրան A-III դասի, Φ 25մմ, 30գծմ,B 15 (200) դասի բետոն	գծմ	24,000	209,908	5037,794
17	Շուկա	Հոկտեմբերյանի տուֆե քարից շրջանային կտրվածքով կիսասյուների տեղադրում, d=400մմ,Ամրան A-III դասի, Φ 25մմ, 14գծմ,B 15 (200) դասի բետոն	գծմ	12,000	121,590	1459,082
18	Շուկա	Հոկտեմբերյանի տուֆե քարից շրջանային կտրվածքով սյուների բազաների տեղադրում, d=500մմ	հատ	8,000	64,474	515,794
19	Շուկա	Հոկտեմբերյանի տուֆե քարից շրջանային կտրվածքով կիսասյուների բազաների տեղադրում, d=500մմ	գծմ	12,000	40,199	482,387
20	Շուկա	Հոկտեմբերյանի տուֆե քարից սյուների բազաների տեղադրում,1100x600x200մմ	հատ	4,000	110,305	441,218
21	Շուկա	Հոկտեմբերյանի տուֆե քարից սյուների բազաների տեղադրում,600x300x200մմ	հատ	4,000	44,665	178,660
22	E11-55	Կտուրի հարթեցնող շերտ ցեմենտ-ավազային երեսասվաղ, 30մմ հաստ.	100մ^2	0,280	151,466	42,410
23	E12-94	Կտուրի վերին շերտը փայլաթիթեղով երկշերտ իզոգամե ծածկույթի պատրաստում	100մ^2	0,280	788,951	220,906
24	E15-301 E15-304	Առաստաղի և պատերի ցեմենտ-ավազե սվաղ մետաղական ցանցի վրա	100մ^2	0,460	347,496	159,848
25	E15-667	Ներկում ճակատային ներկով	100մ^2	0,460	137,917	63,442
26	E16-57	Ջրահեռացման քառակուսի խողովակի տեղադրում, 90x90մմ	գծմ	6,000	4,295	25,769
		Ընդամենը				**11494,348**
		Բարեկարգում				
1	E1-1612	Բակում գրունտի քանդում բուլդոզերով, 10մ տեղափոխությունով, կուտակում	1000մ^3	0,080	79,388	6,351
2	E1-961	Նույնը՝ գրունտի ձեռքով քանդում	մ^3	10,000	2,930	29,304
3	E1-1580	Շին աղբի բարձում մեխանիզմով ավտոհինքնաթափերի վրա	1000մ^3	0,090	186,632	16,797
4	E310-10	Տեղափոխություն մինչև 10 կմ,բեռնաթափում	տն	166,500	1,998	332,669
5	E1-1746	Տարածքի համահարթեցում մեխանիզմով	1000մ^2	0,400	4,662	1,865
6	E27-86-1	Բազալտե եզրաքարերի տեղադրում, 300x150մմ չափ., բետոն B-15, (M200)	գծմ	98,000	9,618	942,597
7	E27-22-1	Հարթակի խճե հիմնային շերտի իրականացում	մ^3	66,000	8,111	535,325

8	Е27-251 կիրարկ. СНиПIV-2-82 частьIV пар.16	Խճե հիմքի բիտումով ներծծում, 2սմ հաստ.	տն	0,927	200,845	186,184
9	Е27-164-2 Е27-165-2	5սմ հաստ.մանրահատիկ ասֆալտաբետոնե հարթակի ծածկույթ	100մ^2	4,500	474,008	2133,035
10	Е27-173 Е27-174	Մայթի ծածկույթի խճե հիմքի իրականացում, 10սմ հաստ.	100մ^2	1,500	114,585	171,877
11	Е27-169	3սմ հաստ.մանրահատիկ ասֆալտաբետոնե մայթի ծածկույթ	100մ^2	1,500	235,668	353,501
		Շենքի արևելյան մաս				
12	Е27-169	3սմ հաստ.մանրահատիկ ասֆալտաբետոնե մայթի ծածկույթ (շենքի արևելյան մայթ)	100մ^2	1,100	235,668	259,234
13	Е11-11	Բետոնից հարթեցնող շերտի պատրաստումը աստիճանների և հարթակների տակ, 50մմ հաստության, В 7,5(100)դասի բետոն	մ^3	2,850	32,263	91,951
14	Е11-55	Հարթեցնող շերտ ցեմենտ-ավազային երեսապատ, 20մմ հաստ.	100մ^2	0,420	121,169	50,891
15	Е11-221 կիրարկ.	Հարթակների երեսապատում բազալտե սալիկներով, 3սմ հաստ	մ^2	42,000	13,976	586,993
16	Е7-733 կիրարկ.	Բազալտե աստիճանների տեղադրում	100մ	0,600	991,132	594,679
		Ընդամենը				**6293,254**
		Ներքին ջրամատակարարում				
1	Е16-34 կիրարկ.	Խողովակ պոլիպրոպիլենային, Φ15մմ	մ	15,000	0,615	9,222
2	Е16-35 կիրարկ.	Խողովակ պոլիպրոպիլենային, Φ20մմ	մ	30,000	0,687	20,611
3	Е16-36 կիրարկ.	Խողովակ պոլիպրոպիլենային, Φ25մմ	մ	30,000	0,915	27,463
4	Е16-37 կիրարկ.	Խողովակ պոլիպրոպիլենային, Φ32մմ	մ	15,000	1,034	15,514
5	Е22-365	Ձևավոր մասերի տեղադրում, Φ15 - Φ32մմ	10հատ	8,000	10,836	86,689
6	Е17-53	Լվացարանի ծորակների տեղադրում	հատ	20,000	6,843	136,852
7	Е16-134	Խցանային փական , Φ15մմ	հատ	24,000	3,886	93,258
8	Е16-134	Խցանային փական , Φ20մմ	հատ	4,000	3,929	15,715
9	Е16-134	Խցանային փական , Φ25մմ	հատ	2,000	4,634	9,268
10	Е16-134	Խցանային փական , Φ32մմ	հատ	1,000	6,307	6,307
11	Е18-212	Սառը ջրի զտիչի տեղադրում, Φ15մմ	հատ	5,000	2,684	13,418
12	Е18-213	Սառը ջրի զտիչի տեղադրում, Φ32մմ	հատ	1,000	3,647	3,647
13	Е16-219	Խողովակաշարի փորձարկում	100մ	0,900	7,413	6,672
		Ընդամենը				**444,637**
		Ներքին կոյուղի				
1	Е16-33	Պլաստմասե խողովակների տեղադրում Φ50մմ	մ	25,000	1,192	29,798
2	Е16-34	Պլաստմասե խողովակների տեղադրում Φ110մմ	մ	40,000	2,279	91,173
3	Е22-365	Պլաստմասե ձևավոր մասերի տեղադրում,	10հատ	0,800	15,191	12,153
4	Е17-21	Կերամիկական լվացարան սիֆոնով,ոտնակով	կ-տ	20,000	31,976	639,528
5	Е17-62	Կերամիկական զուգարանակոնք ջրթող բաքիկով	կ-տ	15,000	38,862	582,936
6	Е17-35	Միզաման	կ-տ	5,000	19,741	98,707

7	E17-36	Հոսակ, d=50	կ-տ	5,000	2,364	11,820
8	E16-219	Խողովակաշարի փորձարկում	100մ	0,650	7,413	4,819
9	E46-49	Անցքերի բացում պատերի մեջ,	100 հատ	0,040	150,129	6,005
10	E46-48	Անցքերի բացում միջնորմների մեջ,	100 հատ	0,020	64,196	1,284
		Ընդամենը				**1470,933**
		Ջեռուցում				
1	E18-76 կիրարկ	Ջեռուցման կաթսայի՝ 36կվտ և շրջանառու պոմպի տեղադրում,	հատ	12	11,66	139,908
2	E18-112	Ալյումինե ջեռուցման մարտկոցների տեղադրում ", H=500մմ, / 1480սեկցիա/,	ԷԿՄ	414,00	17,20	7122,188
3	E16-38 կիրարկ	Խողովակ պոլիպրոպիլենից, Φ32մմ,	մ	180,0	2,94	529,733
4	E16-37 կիրարկ	Խողովակ պոլիպրոպիլենից, Φ25մմ,	մ	680,0	1,70	1154,171
5	E16-36 կիրարկ	Խողովակ պոլիպրոպիլենից, Φ20մմ,	մ	290,0	1,22	354,348
6	E16-35 կիրարկ	Խողովակ պոլիպրոպիլենից, Φ15մմ,	մ	50,0	1,00	50,025
7	E16-40 կիրարկ	Բաշխիչ կոլեկտոր Φ57մմ անկար մետաղե խողովակից , 5հատ,L=0,5մ	մ	2,5	1,91	4,767
8	E22-365	Պոլիպրոպիլենից ձևավոր մասերի տեղադրում	10հատ	98,00	8,74	856,389
9	E18-229	Օդահեռացման փականների տեղադրում , Φ15մմ	հատ	150	0,44	65,936
10	E16-134	Խցանավոր փականների տեղադրում, Φ15մմ	հատ	328	2,44	800,846
11	E16-134	Խցանավոր փականների տեղադրում, Φ20մմ	հատ	32	2,83	90,474
12	E16-135	Խցանավոր փականների տեղադրում, Φ32մմ	հատ	36	3,56	128,211
13	E16-219	Խողովակաշարի փորձարկում	100մ	12,00	7,38	88,500
14	E46-49	Անցքերի բացում պատերի մեջ,	100 հատ	0,59	150,13	88,576
15	E46-48	Անցքերի բացում միջնորմների մեջ,	100 հատ	0,94	64,20	60,344
		Ընդամենը				**11534,414**
		Ջեռուցման սարքավորումներ (առանց տեղադրման)				
1	Շուկա	Ջեռուցման կաթսա, 36կվտ	հատ	6	460,00	2760,000
2	Շուկա	Շրջանառու պոմպ,	հատ	6	125,00	750,000
		Ընդամենը				**3510,000**
		Ներքին էլեկտրալուսավորություն				
		1. Մոնտաժ-ին աշխատանքներ				
1	E8-572-1	Ուժային վահան, ՈՒՎ-1, մետաղե արկղ՝	հատ	1,0	4,451	4,451
2	E8-525-3	Անջատիչ ավտոմատ, 3բեվեռանի I=100Ա	հատ	15,0	3,195	47,918
3	E8-612-10	Տուփ ավտոմատ անջատիչների համար,	հատ	8,0	4,173	33,386
4	E8-525-2	Անջատիչ ավտոմատ, 3բեվեռանի I=63Ա	հատ	2,0	2,178	4,356
5	E8-525-1	Անջատիչ ավտոմատ, 1բեվեռանի I=25Ա	հատ	50,0	1,880	93,990
6	E8-416-1	Մալուխի անցկացում	100մ	1,7	41,407	72,048
7	E8-402-2	Հաղորդալարի լարանցում	100մ	17,6	24,536	431,826
8	E8-591-2	Անջատիչ 1 ստեղանի,	հատ	95,0	0,221	20,960
9	E8-591-10	Անջատիչ, 2 ստեղանի,	հատ	80,0	0,579	46,351
10	E8-591-7	Խրոցային վարդակ, թաքնված տեղադրման համար, 250Վ. 16Ա,,	հատ	340,0	0,257	87,278

11	E8-599-1 կիրարկ	Լուսատուների տեղադրում, ,LED-60վտ	հատ	270,0	1,819	491,018
		2.Նյութերի արժեքը				
12	market	Ուժային վահան, ՈՒՎ-1, մետաղե արկղ՝	հատ	1,0	58,262	58,262
13	market	Անջատիչ ավտոմատ, 3բեվեռանի I=100Ա	հատ	15,0	29,131	436,968
14	market	Տուփ ավտոմատ անջատիչների համար,	հատ	8,0	5,826	46,610
15	market	Անջատիչ ավտոմատ, 3բեվեռանի I=63Ա	հատ	2,0	23,305	46,610
16	market	Անջատիչ ավտոմատ, 1բեվեռանի I=25Ա	հատ	50,0	1,748	87,394
17	market	Անջատիչ ավտոմատ, 1բեվեռանի I=16Ա	հատ	27,0	1,748	47,193
18	market	Մալուխ ВВГ 5x16 մմ2	մ	140,0	3,379	473,091
19	market	Մալուխ ВВГ 5x25 մմ2	մ	30,0	5,244	157,308
20	market	Տուփ տեղադրման	հատ	615,0	0,087	53,747
21	market	Անջատիչ 1 ստեղանի,	հատ	95,0	0,501	47,600
22	market	Անջատիչ, 2 ստեղանի,	հատ	80,0	0,699	55,932
23	market	Խրոցային վարդակ, թաքնված տեղադրման համար, 250Վ. 16Ա,, հողակցված (TITAN)	հատ	340,0	1,037	352,604
24	market	էլ. հաղորդալար ՊՊՎԳ, 2 x 4մմ.ք	մ	800,0	0,291	233,050
25	market	էլ. հաղորդալար ՊՎ, 1 x 4մմ.ք	մ	800,0	0,228	182,711
26	market	էլ. հաղորդալար ՊՊՎԳ, 2 x 2.5մմ.ք	մ	5600,0	0,262	1468,212
27	market	էլ. հաղորդալար ՊՎ, 1x 2.5մմ.ք	մ	5600,0	0,151	848,301
28	market	էլ. հաղորդալար ՊՊՎԳ, 2x 1,5մմ.ք	մ	2200,0	0,190	417,858
29	market	էլ. հաղորդալար ՊՊՎԳ, 1x 1,5մմ.ք	մ	2600,0	0,190	493,832
30	market	Լուսատուներ , LED-60վտ	հատ	270,0	12,818	3460,787
		Հողանցում				
31	E8-472-7	Հողանցման հաղորդաթիթեղ շերտավոր պողպատից 40x4մմ չափսերով	մ	34,0	0,265	9,005
32	E8-471-1	Հողանցման էլեկտրոդներ	Հատ	40,0	0,276	11,032
		Նյութեր				
33	market	Հողանցման հաղորդաթիթեղ շերտավոր պողպատից 40x4չափսերով	մ	34,0	0,584	19,863
34	market	Պողպատ անկյունային 70x70x5մմ	մ	60,0	2,336	140,148
		Ընդհանուրը				**10481,699**
		Մարդատար վերելակի մոնտաժում, բեռնատար վերելակի միջհարկային ծածկ				
		Վերելակի մոնտաժում				
1	Շուկա	Վերելակի մոնտաժում, ֆիննական "KONE" ֆիրմայի, PW 08/10-19(5/5), հինգ կանգառանի, բեռնատարողությունը 630 կգ	Կ-տ	1	1729,279	1729,279
2	E6-175	Ե/բետոնից միաձույլ ծածկի կառուցում, B 20 (250) դասի բետոն,	$մ^3$	5,00	54,144	270,721
		ԸՆԴԱՄԵՆԸ				**2000,000**
1	Շուկա	Վերելակ ֆիննական "KONE" ֆիրմայի, PW 08/10-19(5/5), հինգ կանգառանի, բեռնատարողությունը 630 կգ /ապրանք/	հատ	1	15800,000	15800,000
		Ընդամենը				**15800,000**
		Քանդման աշխատանքներ				**2251,762**
		Պատեր, միջնորմներ				**1808,253**
		Աստիճանավանդակ				**7270,130**
		Դռներ				**5462,155**
		Պատուհաններ				**6312,962**
		Հատակներ				**25017,711**

		Ներքին հարդարում				29918,505
		Տանիք				1813,318
		Սյունազարդ նախասրահ				11494,348
		Բարեկարգում				6293,254
		Ներքին ջրամատակարարում				444,637
		Ներքին կոյուղի				1470,933
		Ջեռուցում				11534,414
		Ներքին էլեկտրալուսավորություն				10481,699
		Մարդատար վերելակի մոնտաժում, բեռնատար վերելակի միջհարկային ծածկ				2000,000
		Ընդամենը				123574,082
		ՎԵՐԱԴԻՐ ԾԱԽՍԵՐ13,3%				16435,353
		ԸՆԴԱՄԵՆԸ				140009,435
		ՇԱՀՈՒՅԹ 11%				15401,038
		Ընդամենը ըստ գլուխների				155410,473
		ժամանակավոր շենքեր և կառույցներ - 1,5%x0,5=0,75%				1165,579
		ԸՆԴԱՄԵՆԸ				156576,052
		Չնախատեսված աշխատանքներ և ծախսեր 3,0%				4697,282
		ԸՆԴԱՄԵՆԸ				161273,333
		Մարքավորումներ /ապրանքների արժեքը/				
		Ջեռուցման կաթսա, 36կվտ և Շրջանառու պոմպ,				3510,000
		Վերելակ ֆիննական, "KONE" ֆիրմայի, PW 08/10-19(5/5),				15800,000
		ԸՆԴԱՄԵՆԸ				180583,333
		ԱԱՀ 20%				36116,667
		ԱՄԲՈՂՋԸ				216700,000

* Կապալառուն աշխատանքները կատարում է՝ ք. Գյումրի Շիրակացի փող. թ.68 - հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն,
Հ/Հ 900011019776
ՀՎՀՀ 02631263

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Գազկոմշին» ՍՊԸ
Ք. Երևան, Նոր Նորքի 9-րդ զ-ծ, 20/53,
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 11500905218000
ՀՎՀՀ 00843968
էլ. հասցեն՝ gascomshin@gmail.com
հեռ. (095)000027

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 2
«03» հոկտեմբեր 2018 թ. կնքված
ՀՀՔԿԴ-ԲՄԱՇՁԲ-ԳՇ-18/1.1 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՀՀ Քննչական կոմիտեի Շիրակի մարզային վարչության շենքի **հիմնանորոգման աշխատանքների կատարման**

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Քանդման աշխատանքներ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	05.12.2018թ
2	Պատեր, միջնորմներ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	05.12.2018թ
3	Աստիճանավանդակ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	05.12.2018թ
4	Դռներ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	05.12.2018թ
5	Պատուհաններ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	05.12.2018թ
6	Հատակներ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	05.12.2018թ
7	Ներքին հարդարում	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	05.12.2018թ
8	Տանիք	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	05.12.2018թ
9	Սյունազարդ նախասրահ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	05.12.2018թ
10	Բարեկարգում	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	05.12.2018թ
11	Ներքին ջրամատակարարում	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	05.12.2018թ

12	Ներքին կոյուղի	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	05.12.2018թ
13	Ջեռուցում	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	05.12.2018թ
14	Ներքին էլեկտրալուսավորություն	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	05.12.2018թ
15	Մարդատար վերելակի մոնտաժում, բեռնատար վերելակի միջհարկային ծածկ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	05.12.2018թ
ԸՆԴԱՄԵՆԸ		Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	05.12.2018թ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն,
Հ/Հ 900011019776
ՀՎՀՀ 02681263

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Գազկոմշին» ՍՊԸ
Ք. Երևան, Նոր Նորքի 9-րդ զ-ծ, 20/53,
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 11500905218000
ՀՎՀՀ 00843968
էլ. հասցեն՝ gascomshin@gmail.com
հեռ. (095)000027

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 3
« 03 » հոկտեմբեր 2018 թ. կնքված
ՀՀՔԿԴ-ԲՄԱՇՁԲ-ԳՇ-18/1.1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45611300/2	այլ շենքերի, շինությունների հիմնանորոգում							147355200	147355200	147355200	147355200	147355200	147355200	**147355200**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն,
Հ/Հ 900011019776
ՀՎՀՀ 02631263

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Գազկոմշին» ՍՊԸ
Ք. Երևան, Նոր Նորքի 9-րդ զ-ծ, 20/53,
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 11500905218000
ՀՎՀՀ 00843968
էլ. հասցեն՝ gascomshin@gmail.com
հեռ. (095)000027

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 4
« 03 » հոկտեմբեր 2018 թ. կնքված
ՀՀՔԿԴ-ԲՄԱՇՁԲ-ԳՇ-18/1.1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« 03 » հոկտեմբեր 2018 թ. կնքված
ՀՀՔԿԴ-ԲՄԱՇՁԲ-ԳՇ-18/1.1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն